տարմագրված հյուպատոսներ, տարբեր ազգային միությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Սանկտ Պետերբուրգում ՀՀ հյուպատոս Ռուբեն Հակոբյանը, Ռուսաստանի Հայերի Միության փոխնախագահ Գերման Անանյանցը և բազմաթիվ հավատացյալ հայորդիք:

ՕԾՎԵՑԻՆ ԱԼԹԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԲԱՌՆԱՈՒԼ ՔԱՂԱՔԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Ալթայի երկրամասի Բառնաուլ քաղաքում նոյեմբերի 12-ին, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի ձեռամբ և առընթերակայությամբ Տ. Մաշտոց քհն. Հակոբյանի, օծվեցին Բառնաուլ քաղաքի Ս. Հռիփսիմե նորակառույց եկեղեցու գմբեթների խաչերը: Օրհնվեց և օծվեց նաև Հայաստանից բերված կարմրատուֆ խաչքարը, որի նվիրատուն է տիար Արամայիս Մարտիրոսյանը: Խաչքարը կանգնեցված է եկեղեցու շրջափակում՝ ի նշանավորումն ռուս և հայ ժողովուրդների բազմադարյա եղբայրության:

Հանդիսավոր այս արարողությանն իրենց ներկայությունն էին բերել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ալթայի երկրամասի թեմի առաջնորդ Մաքսիմ եպիսկոպոսը, Բառնաուլի շրջանային դումայի նախագահ Ս. Կրասնովը, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմաթիվ հայորդիք, ովքեր բնակություն են հաստատել Ալթայի երկրամասում, մասնավորապես Բառնաուլ քաղաքում:

Սրբազան արարողության ավարտին Գերաշնորհ Սրբազան Հայրն իր օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ուղղեց հավաքված ժողովրդին՝ կոչ անելով, որ հեռավոր այս երկրամասում կայք հաստատած մեր ժողովրդի զավակունք հավատարիմ մնան ազգային – հոգևոր այն արժեքներին, որ ժառանգել ենք մեր սուրբ նախնյաց կողմից, որով որպես ազգ և ժողովուրդ արդեն 1700 և ավելի տարիներ ապրում և արարում է մեր ժողովուրդը՝ ապավինած փրկարար Խաչին:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ԴՊՐՈՑԸ ՍԿՍԵՑ 2006 Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Մոսկվայի հայոց եկեղեցու կրթական կենտրոնի 2006 թ. ուսումնական տարվա բացման արարողությունը: Տարեմուտի սկիզբն ազդարարող այս հավաքը, իր տեսակի մեջ լինելով առաջինը, կազմակերպվել էր նորակազմ դպրոցի տնօրենության ու աշակերտական կազմի ջանքերով:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում դպրոցում սովորելու ցանկություն էին հայտնել ավելի քան 150 աշակերտներ, որոնց թիվը գնալով օրեցօր ավելանում է: Կրթական կենտրոնը հնարավորություն է տալիս աշակերտներին հաճախելու մայ-

րենի լեզվի ու գրականության, հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու պատմության դասընթացներին, ինչպես նաև երգի, պարի ու շախմատի խմբակներին:

Հավաքի գեղարվեստական մասին իրենց հայրենաշունչ, հուզիչ կատարումներով ներկաներին ողջունեցին դպրոցի փոքրիկ սաները՝ արտասանելով Հայաստանին ու մայրենի լեզվին նվիրված քառյակներ: Ողջույնի խոսք ասաց նաև մանկավարժ տիկին Էլեոնորա Մանուչարյանը՝ դպրոցին նվիրելով իր հեղինակած «Մայրենի լեզվի ուսուցման մեթոդական ձեռնարկը», որը նախատեսված է հայրենիքից դուրս, ռուսալեզու շրջանակներում գործող հայկական դպրոցների համար:

Հավարտ հանդիսավոր այս արարողության, բոլոր ներկաներին իր օրհնության և բարեմաղթանքի խոսքն ասաց Ռուսահայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը՝ մասնավորապես նշելով, որ տարիներ առաջ Մոսկվայի քաղաքային իշխանությունները վարձակալական հիմունքներով թեմին էին տրամադրել նախկինում որպես մանկապարտեզ գործող, սակայն այրված ու հիմնովին ավերակ այս շինությունը, որը մի քանի ամիսների ընթացքում հիմնովին վերանորգվել է և այսօր իր հյուրընկալ դռներն է բացում մոսկվաբնակ մեր հայրենակիցների առջև՝ որպես հայեցի կրթության ու դաստիարակության կենտրոն:

Հավաքի վերջում հնչեցին զանգի ղողանջները, որից հետո մանուկներն անցկացրեցին մայրենի լեզվի առաջին դասը, նրանց տրվեցին Այբբենարաններ ու աշխատանքային տետրեր, ինչպես նաև մնացյալ բոլոր անհրաժեշտ դասագրքերը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ